ՀՀ Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանի շնորհավորանքի ուղերձը՝ Ոստիկանության աշխատողի օրվա առթիվ

16.04.2024

Հայաստանի Հանրապետության ոստիկանության հարգելի՛ ծառայողներ,

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ ձեր մասնագիտական օրվա՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության օրվա առիթով:

Ոստիկանական համակարգն իր գործունեությամբ կարգավորում է երկրի իրավական դաշտը, անվերապահորեն պաշտպանում քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

Որպես իրավապահ ինստիտուտ՝ ոստիկանությունը իրավակարգի պահպանման, երկրի կայունության երաշխավորն ու հիմնասյունն է:

Սիրելի՛ ոստիկաններ,

Օգտվելով առիթից՝ շնորհավորում եմ բոլորիդ ձեր մասնագիտական տոնի աթռիվ՝ մաղթելով ուժ, կամք, զորություն, անփորձանք և արժանապատիվ ծառայություն՝ ձեր առաքելությունն անմնացորդ կատարելու գործում:

Շնորհավորում եմ մեր սիրելի վետերաններին և մաղթում երկար ու վաստակած տարիներ:

Շնորհավոր տոնդ, ոստիկա՛ն: